ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արայիկ Հարությունյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Բելգիա, Բրյուսել 2019թ նոյեմբերի 22

4. Հրավիրող Կողմը

Եվրամիության Արևելյան Գործընկերություն

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Արևելյան Գործընկերության Պլատֆորմ 5

6. Քննարկված Թեմաները

- Արևելյան Գործընկերության հիմնական ձեռքբերումները
- 20 արդյունք 2020թ. համար և համագործակցության ապագան կրթության ոլորտում
- Ուսուցիչների դերը երիտասարդներին ապագա հասարակության և աշխատանքի համար պատրաստելու գործում
- Ժողովրդագրական և տեխնիկական փոփոխությունների ստեղծած հնարավորություններն ու մարտահրավերները
- Խելացի մասնագիտական զարգացման և տեխնիկայի փոխադրությունը
- Սովորել և սովորեցնել թվային դարաշրջանում
- Կրթություն ուղղված կայուն զարգացմանը

7. Հանդիպումները, Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«20 արդյունք 2020թ. համար և համագործակցության ապագան կրթության ոլորտում», «Ուսուցիչների դերը երիտասարդներին ապագա հասարակության և աշխատանքի համար պատրաստելու գործում» խորագրերը կրող նախարարական հանդիպումների ընթացքում քննարկվել են այն հիմնական միտումները, որոնք էական ազդեցություն ունեն կրթական գործընթացում: Դրանք են գլոբալիզացիան, ժողովրդագրական մարտահրավերներն ու

միգրացիան, թվայնացումը, տեխնոլոգիաների և արհեստական բանականության զարգացումը, կլիմայական փոփոխությունները, ներառականությունը, ուսուցիչների դերի արժևորումը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Նախարարական հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև այնպիսի հարցեր, ինչպիսին են Արևելյան գործընկերության երկրներում կրթության միջազգայնացման և բարեփոխումների խթանման ուղիները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ելույթի ժամանակ կարևորվել է Արևելյան գործընկերության շրջանակում ԵՄ-ի հետ համագործակցությունը և նշվել է, որ այժմ կրթության հիմնական խնդիրներն են՝ երկրի տնտեսության զարգացման գործում ներդրում ունենալու պատրաստ աշխատուժի ստեղծումը և տեխնոլոգիաների ներգրավմամբ զարգացման ապահովումը: Խոսվել է Հայաստանում սկսված բարեփոխումների գործընթացի մասին՝ մասնավորապես նշելով հանրակրթական չափորոշիչների փոփոխության, միջին մասնագիտական կրթության ոլորտում աշխատանքի վրա հիմնված ուսուցման, ինչպես նաև կրթության միջազգայնացման ու շարժունության ոլորտում իրականացվող քայլերը: Նախարարը հատուկ ընդգծել է կրթության ոլորտում թվային տեխնոլոգիաների ներդրման կարևորությունը՝ հաշվի առնելով, որ 21-րդ դարի աշակերտին հետաքրքրելու համար կրթությունը պետք է 21-րդ դարի պահանջներին համապատասխան լինի:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

27.11.2019

Recoverable Signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378